

Խոր վշտով տեղեկացնում ենք, որ 2021 թ. մարտի 31-ին կյանքից հեռացել է Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) վաստակաշատ գիտնական, իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնի ղեկավար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ալբերտ Էդուարդի Ավետիսյանը:

Ալբերտ Էդուարդի Ավետիսյանը:



Երևանի պետական համալսարանը ավարտելուց հետո Ալբերտ Ավետիսյանը գիտական գործունեությունն սկսել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտում 1971թ.-ից պրոֆեսոր Ռ. Ավագյանի լաբորատորիայում:

Բարձր էներգիայի էլեկտրոնների՝ բյուրեղների հետ փոխազդեցության խնդիրները եղել են նրա առաջին ուսումնասիրության առարկաները, որոնց ուղղությամբ նա պաշտպանեց իր թեկնածուական ատենախոսությունը 1988 թվականին:

1990 թ. նա CERN-ում մասնակցեց գերբարձր (180 ԳէՎ) էներգիայի էլեկտրոնների ճառագայթման ուսումնասիրության եզակի գիտափորձին, որտեղ առաջին անգամ դիտվեցին և՛ կանալացման, և՛ կոհերենտ արգելակման սպեկտրները միաժամանակ:

1993 թվականից սկսած, օգտագործելով ինստիտուտում կուտակված տարրական մասնիկների ուսումնասիրության իր հարուստ գիտելիքները, նա մեծ հաջողությամբ մասնակցեց գերմանական HERMES և OLYMPUS համատեղ

գիտափորձերին, որոնք տվեցին նոր պատկերացումներ մասնիկների ներքին կառուցվածքի վերաբերյալ:

Ալբերտ Ավետիսյանի անմիջական ղեկավարությամբ Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում ստեղծվել է իզոտոպների ուսումնասիրության և արտադրության գիտա-փորձարական բազա՝ Երևան քաղաքի բժշկական կլինիկաներին ռադիոնուկլիդներով ապահովելու համար: Այսօր մեծ թափով առաջ են ընթանում արագացուցչային մեթոդներով ^{99m}Tc , ^{64}Cu , ^{67}Ga և ^{68}Ga իզոտոպների ստացման տեխնոլոգիաների ստեղծման և զարգացմանն ուղղված աշխատանքները:

Երկար տարիներ Ալբերտ Ավետիսյանը իր հարուստ փորձն էր հաղորդում երիտասարդներին, դասավանդում էր հատուկ կուրս՝ «Գիտափորձի մեթոդիկա» և «Բժշկական իզոտոպների հետազոտություն և արտադրություն» ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնում և ԱԱԳԼ մագիստրատուրայում: Հեղինակ է ավելի քան 130 գիտական հոդվածների: Մարդկային մեծ հմայք ունեցող Ալբերտ Էդուարդի Ավետիսյանի հիշատակը հավերժ կմնա այն անձանց սրտերում, ում բախտ է վիճակվել ճանաչելու և աշխատելու նրա հետ:

01.04.2021